

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/3

12 մայիսի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Հովսեփ Ներսիսյանի 21.04.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 23.03.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 280576 որոշման և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի դրույթների կիրառման դեմ:

Քաղաքացի Հովսեփ Ներսիսյանի բողոքում բերված փաստարկները.

Հովսեփ Ներսիսյանը (այսուհետ նաև բողոքաբեր) հայտնում է, որ գրանցվել է հարկային մարմնում որպեսզի կատարի իր վրա Սահմանադրությամբ դրված պարտականությունը, մասնավորապես՝ օրենքով սահմանված կարգով և չափով վճարի հարկերը, տուրքերը, պարտադիր այլ վճարումները:

Բողոքաբերը հայտնում է, որ 2013 թ-ին իրեն պատկանող բնակարանը վարձակալության պայմանագրի հիման վրա տրամադրել է վարձակալության: 2013 թ. վարձակալական վճարը կազմել է 456,000 դրամ, իսկ եկամտային հարկը՝ 45.600 դրամ, որը օրենքով սահմանված ժամկետներում վճարվել է:

Չունենալով մասնագիտական գիտելիքներ, չտիրապետելով հարկային օրենսդրությանը, եկամտային հարկի 2013 թ-ի հաշվետու ժամանակաշրջանին վերաբերվող հաշվարկը 15.04.2014 թ-ին ներկայացվել է մեխանիկական սխալով: Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանը նշել է 2014 թ-ը:

Մինչև առ 17.03.2015 թ-ը Մաշտոցի հարկային տեսչությունը չի տեղեկացրել (ծանուցել), որ եկամտային հարկի հաշվարկը սխալ է ներկայացվել: 17.03.2015 թ-ին Մաշտոցի հարկային տեսչության աշխատակիցը զանգահարել և տեղեկացրել է, որ եկամտային հարկի հաշվարկը սխալ է ներկայացվել՝ առաջարկելով կատարել ճշգրտում: Այնուհետև 23.03.2015 թ-ի Մաշտոցի ՀՏ պետի թիվ 280576 որոշումով բողոքաբերը ենթարկվել է վարչական պատասխանատվության համաձայն ՎԻՎ օրենսգրքի 169.1 հոդվածի՝ 20.000 դրամի չափով, որն իր կողմից վճարվել է:

Բողոքաբերը գտնում է, որ Մաշտոցի ՀՏ-ի կողմից վարչական պատասխանատվության ենթարկելուց չի պահպանվել ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված դրույթները, այն է՝ վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի: Միաժամանակ բողոքաբերը տեղեկացել է, որ Մաշտոցի ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքը:

Բողոքաբերը գտնում է, որ տվյալ պարագայում նշված հոդվածի կիրառումը ոչ օրինաչափ է, հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, որի համաձայն վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց

որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով սահմանված դրույթներով բողոքաբերը խնդրում է անվավեր ճանաչել Մաշտոցի ՀՏ պետի 23.03.2015 թ-ի թիվ 280576 որոշումը և չկիրառել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տուգանքը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ Հովսեփ Ներսիսյանի բողոքով բերված այն պահանջը, որը վերաբերվում է ՀՀ ՖՆ Մաշտոցի ՀՏ պետի 23.03.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 280576 որոշումն անվավեր ճանաչելուն, Հանձնաժողովի կողմից չի կարող քննության առնվել, քանի որ այդ մասով բողոքը բերվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ:

Ինչ վերաբերվում է բողոքով բերված մյուս պահանջին, որը վերաբերվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը չկիրառելուն, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

Հովսեփ Ներսիսյանը վարձակալության պայմանագրով իրեն պատկանող բնակարանը 2013 թ-ին տրամադրել է վարձակալության: 2013 թ-ի վարձակալական վճարը կազմել է ընդամենը 456.000 դրամ, իսկ եկամտային հարկը՝ 45.600 դրամ, որը օրենքով սահմանված ժամկետներում նրա կողմից վճարվել է:

2013 թ-ի հաշվետու ժամանակաշրջանին վերաբերվող եկամտային հարկի հաշվարկը Հովսեփ Ներսիսյանի կողմից ներկայացվել է 15.04.2014 թ-ին, սակայն հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանը 2013 թ-ի փոխարեն թյուրիմացաբար նշվել է 2014 թ-ը: Արդյունքում, 2013 թ-ի հաշվետու ժամանակաշրջանին վերաբերվող եկամտային հարկի հաշվարկը Մաշտոցի ՀՏ կողմից համարվել է սահմանված ժամկետում չներկայացված, ինչը և հիմք է հանդիսացել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Հովսեփ Ներսիսյանի կողմից 2013 թ-ի համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է: Այսինքն, թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ Հովսեփ Ներսիսյանի

վրա դրված պարտականությունները բովանդակային առումով վերջինիս կողմից կատարվել են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Հովսեփ Ներսիսյանի բողոքով բերված պահանջը՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցը չկիրառելու վերաբերյալ, ենթակա է բավարարման:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Քաղաքացի Հովսեփ Ներսիսյանի 21.04.2015 թ-ի բողոքը բավարարել մասնակի՝ անձնական հաշվի քարտից նվազեցնելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված պարտավորությունները:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ